

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Զարգացումներ Վրաստանի շուրջ	4
Միջազգային ճգնաժամային խմբի զեկույցը Ադրբեջանում իսլամի վերաբերյալ	7
«Заговор слабых»	10
Вопрос геноцида армян как инструмент давления Израиля	15
Հորդանան. ապագա տարածաշրջանային կենտրոն	17
Будущее американского великодержавия	19

ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ՎՐԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՁ

Չնայած մայիսի 21-ին Վրաստանում խորհրդարանական ընտրություններ են, և հունվարին այդ երկրում կայացած նախագահական ընտրություններից հետո հատկապես կարևոր է թվում այն հարցը, թե ինչքանով կհաջողվի Սահակաշվիլու կուսակցությանը ստանալ անհրաժեշտ քանակությամբ ձայներ՝ փաստացի միակուսակցան կառավարություն ձևավորելու համար, սակայն տարածաշրջանային գործընթացների ու Հայաստանի ազգային անվտանգության տեսանկյունից էլ ավելի էական են «ՆԱՏՕ-Վրաստան» համագործակցության շուրջ ընթացող զարգացումները՝ մի քանի պատճառով.

- թեև ակնհայտ է դառնում, որ ՆԱՏՕ-ի հետ Վրաստանի փոխգործակցության և դրանից ածանցված ռուս-վրացական հարաբերությունների սրացումների ու արխագական, հարավօսական խնդիրների հարցն ամենից մեծ ազդեցությունը կունենա Վրաստանի խորհրդարանական ընտրությունների վրա (և այդ առումով այն նաև պետք է ընկալել որպես Սահակաշվիլու վարչակազմի հաջողված PR ակցիա, որը շեղում է ընտրազանգվածի ուշադրությունը ներքին՝ սոցիալ-տնտեսական խնդիրներից), սակայն փաստն այն է, որ անդամակցությունը դաշինքին վրացական վերնախավի գերակշիռ մասի որոշումն է¹, և անցած 3-4 տարիներին ռուսական քաղաքականությանը չհաջողվեց որևէ փոփոխության հասնել այդ հարցում²,
- ՆԱՏՕ-ին Վրաստանի անդամակցության հարցը դարձել է հարավկովկասյան քաղաքականության ամենաորոշիչ գործոնը, և այդ իմաստով՝ եթե նախորդ տարիներին տարածաշրջանային քաղաքականության մեջ իշխող էր դարաբաշյան, արխագական ու հարավօսական հակամարտությունների հետ կապված տրամաբանությունը, ապա այսօր այդ տեղը զբաղեցնում է ՆԱՏՕ-ին Վրաստանի անդամակցության հարցը,
- Հյուսիսատլանտյան դաշինքին Վրաստանի անդամակցությունը կամ Թբիլիսիի ձախողումն այդ հարցում կարող է լրջորեն փոխել աշխարհաքաղաքական փոխդասավորվածությունը Հարավային Կովկասում,
- այսինքն՝ ամեն դեպքում մեզ սպասում են լուրջ փոփոխություններ, որոնք պարզապես չեն կարող իրենց ազդեցությունը չունենալ Հայաստանի ազգային անվտանգության վրա, մյուս կողմից՝ հարավկովկասյան բոլոր երկրների պարագայում էլ սպասելի են ազգային անվտանգության հայեցակարգերին առնչվող նորամուծություններ:

Իրավիճակային վերլուծություն

Ապրիլի 3-ին Բուխարեստում ընդունված ՆԱՏՕ-ի անդամ պետությունների ղեկավարների գագաթաժողովի հռչակագրի 23-րդ կետում կարդում ենք. «ՆԱՏՕ-ն ողջունում է Ուկրաինայի և Վրաստանի եվրաստլանտյան ձգտումը ՆԱՏՕ-ին անդամակցելու գործում: Այսօր մենք համաձայնության եկանք այն մասին, որ այդ երկրները կդառնան ՆԱՏՕ-ի անդամ: ...[ՆԱՏՕ-ին] անդամակցության ուղիղ ճանապարհին Ուկրաինայի և Վրաստանի համար Ան-

¹ Պատահական չէ, որ հունվարի 5-ին Վրաստանում կայացած նախագահական ընտրություններին զուգահեռ տեղի ունեցած ՆԱՏՕ-ին այդ երկրի անդամակցության վերաբերյալ հանրաքվեում կողմ արտահայտվեց քվեարկողների 72.5%-ը:

² Ապրիլի 16-ին հրապարակված Կրեմլի որոշումը Աբխազիայի ու Հարավային Օսիայի հետ փոխգործակցությունում անցնել նոր մակարդակի՝ փաստացի ճանաչել այդ հանրապետությունների կողմից տրամադրված փաստաթղթերը, բազմոլորտ աջակցություն ցուցաբերել Աբխազիայում ու Հարավային Օսիայում բնակվող ոչ միայն Ռուսաստանի քաղաքացիներին, առաջին հերթին վկայում է դրա մասին: Ըստ ռուսական աղբյուրների, Մոսկվան պատրաստվում է նաև ներկայացուցչություններ բացել Մուխոմոմում և Ցիխնվալում:

դամակցության գործողությունների ծրագիրը (ԱԳԾ)¹ հաջորդ կարևոր քայլն է: Այսօր մենք հստակորեն նշում ենք, որ պաշտպանում ենք այդ երկրների թեկնածությունները ԱԳԾ-ին միանալու հարցում: ...[ՆԱՏՕ անդամ երկրների] արտաքին գործերի նախարարները լիազորված են որոշում կայացնելու ԱԳԾ-ին Ուկրաինայի և Վրաստանի միանալու հարցի առնչությամբ»:

Թեև կասկածից վեր է, որ ՆԱՏՕ-ի բուխարեստյան գազաթաժողովի ընթացքում գլխավորապես Գերմանիայի առաջնորդությամբ գործած երկրների՝ Ֆրանսիա, Իտալիա, Բելգիա, բացասական դիրքորոշումը՝ դեմ դուրս գալ ԱԳԾ-ին Ուկրաինայի և Վրաստանի միանալու տարբերակին (ինչպես պնդում էին ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան ու Լեհաստանը), կարելի է դասել ռուսական դիվանագիտության հաջողությունների շարքին², սակայն գազաթաժողովին հաջորդած Մոսկվայի քայլերը վկայում են, որ այդ հաջողությունը Կրեմլում համարում են խիստ ժամանակավոր:

Ապրիլի 7-ին ռուսական «Коммерсант»-ը գրեց, թե Բուխարեստում կայացած «Ռուսաստան-ՆԱՏՕ» խորհրդի փակ նիստի ժամանակ Պուտինն ուղղակի սպառնացել է իր արևմտյան գործընկերներին անքսիայի ենթարկել Ղրիմն ու Արևելյան Ուկրաինան, եթե Կիևը դառնա Հյուսիսատլանտյան դաշինքի անդամ: Վրաստանի պարագայում, պարբերականի փոխանցմամբ, Կրեմլի ղեկավարը խոստացել էր ճանաչել Աբխազիայի ու Հարավային Օսիայի անկախությունները:

Հասկանալի է, որ «Коммерсант»-ի հրապարակումը ռուսական դիվանագիտության լրատվական արտահոսքն էր՝ առաջին հերթին ուղղված Կիևին ու Թբիլիսիին, և հետագա օրերին վրացական ուղղությամբ ի հայտ եկած զարգացումները³ դրա վակայությունն էին, սակայն մեր պարագայում հիմնական ուշադրությունը պետք է կենտրոնացնել այլ հանգամանքի վրա:

Իրականում, ռուսական կողմի նման սուր քայլերը պետք է որ մեզ հուշեն, թե ստեղծված իրավիճակը Մոսկվայում գնահատում են այսպես՝

- չնայած Բուխարեստում տրված դադարին, ՆԱՏՕ-ին Ուկրաինայի և Վրաստանի անդամակցության հարցում ԱՄՆ-ը և եվրոպական ազդեցիկ երկրները սկզբունքային դրական համաձայնության են հանգել (և այդ առումով ՆԱՏՕ-ի բուխարեստյան հռչակագրի 23-րդ կետը պետք է ավելի շուտ ընկալել այդ իմաստով, քան որ դա միտված էր ամերիկյան դիվանագիտության հեղինակությունը փրկելուն),
- թեև մի կողմից արևմտաեվրոպական վերոհիշյալ երկրների, իսկ մյուս կողմից՝ ԱՄՆ-ի ու նրա դաշնակիցների միջև շարունակում են պահպանվել հակասությունները՝ կապված ՆԱՏՕ-ին Ուկրաինայի և Վրաստանի անդամակցության ժամկետի հետ, սակայն անգամ այդ կետում գործի է զգված փոխհամաձայնության հասնելու մեխանիզմը (խոսքը դաշինքի բուխարեստյան գազաթաժողովի այն որոշման մասին է, որ ԱԳԾ-ին Ուկրաինայի և Վրաստանի միանալու հարցը կարող են այլևս լուծել դաշինքի անդամ պետությունների արտգործնախարարները, և հիմք ընդունելով հռչակագրի 23-րդ կետը՝ պետք է դարձյալ ենթադրել, որ ՆԱՏՕ-ին Ուկրաինայի և Վրաստանի անդամակցության հարցում Արևմուտքում, ըստ ամենայնի, կա սկզբունքային փոխհամաձայնություն):

¹ Անդամակցության գործողությունների ծրագիր (ԱԳԾ), Membership Action Plan (MAP): Այն համարվում է վերջին փուլը Հյուսիսատլանտյան դաշինքի լիիրավ անդամ դառնալուց առաջ:

² Ուշագրավ է, որ այդ առումով հատկապես Միացյալ Նահանգների փորձագիտական շրջանակները կրկին սկսեցին արձարծել Ռուսաստանից Եվրոպայի էներգետիկ կախվածության հարցը, ինչը, այդ աղբյուրների ներկայացմամբ, իրեն զգալ տվեց ԱԳԾ-ին Ուկրաինայի և Վրաստանի միանալու հարցում Գերմանիայի բռնած դիրքորոշման մեջ:

³ Խոսքը ռուսական ԱԳՆ-ի ապրիլի 16-ի վերոհիշյալ հրապարակման մասին է, ուր ասվում էր, թե Կրեմլում որոշում է կայացվել Աբխազիայի ու Հարավային Օսիայի հետ սկսել նոր որակի փոխգործակցություն:

Հետևություններ

Անկախ այն հանգամանքից, թե ինչ ընթացք կստանա ՆԱՏՕ-ին Վրաստանի անդամակցության հարցը և ինչ զարգացումներ ի հայտ կգան այդ հարցի առնչությամբ, Հայաստանի անվտանգության տեսանկյունից հարկ էնք համարում առանձնացնել հետևյալ դիտարկումները.

- կարճատև հեռանկարում ԱՄՆ-ի ու նրա դաշնակիցների համար հարավկովկասյան քաղաքականության նախագծերից առաջնային է հանդիսանալու ՆԱՏՕ-ին Վրաստանի անադամակցելու հարցը, հետևաբար պետք է քիչ հավանական համարել այն, որ ներկայում Ղարաբաղյան հիմնախնդրում status quo-ի փոփոխությամբ ամենից շատ շահագրգռված ամերիկյան կողմը նշված հիմնախնդրի ուղղությամբ կձեռնարկի շոշափելի ինչ-որ քայլեր,
- սակայն ՆԱՏՕ-ին Վրաստանի անդամակցության պարագայում կարող է էականորեն փոխվել Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրին առնչվող իրադրությունը, քանի որ տարածաշրջանում ներգրավված գերտերություններից մեկը (տվյալ դեպքում՝ ԱՄՆ-ը) կստանա լրացուցիչ լուրջ լծակներ, մասնավորապես, Հայաստանի վրա ներազդելու համար,
- պարզ երևում է, որ ՆԱՏՕ-Վրաստան այսօրվա զարգացումներին զուգահեռ աճում է աբխազական կամ հարավօսական ուղղությամբ (կամ երկու ուղղություններով էլ միաժամանակ) ռազմական գործողությունների վերսկսման հավանականությունը (որը կարող է պահպանվել անգամ դաշինքին Թբիլիսիի անդամակցելուց հետո), քանի որ ստեղծված իրավիճակում նշված ճանապարհին այն միակ գործող լծակն է, որը կարող է բանեցնել Մոսկվան՝ Վրաստանի վրա ազդեցություն գործելու համար. այդ պարագայում չի կարող մեջտեղ չգալ Հայաստան-Ռուսաստան-Վրաստան եռանկյունում լարվածության առաջացման հանգամանքը,
- և վերջապես, ՆԱՏՕ-ին Վրաստանի անդամակցության պարագայում Հայաստանի քաղաքական դեկավարությունը պետք է սպասելի համարի ռուս-ադրբեջանական հարաբերությունների ջերմացմանը միտված Մոսկվայի քայլերը:

Մարգիս Հարությունյան
«Նորավանք» հիմնադրամ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԽՄԲԻ ԶԵԿՈՒՅՑԸ ԱՂԲԵՋԱՆՈՒՄ ԻՍԼԱՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Միջազգային ճգնաժամային խումբը (International Crisis Group) վերջերս հրատարակեց «Ադրբեջան. անկախ իսլամը և պետությունը» խորագրով զեկույցը. Azerbaijan: Independent Islam and the State, Europe Report No. 191-25, 25 March, 2008, www.crisisgroup.org/library/documents/europe/caucasus/191_azerbaijan_independent_islam_and_the_state.pdf/: Չեկույցը կազմված է չորս գլուխներից, Եզրակացությունից և Հավելվածից:

Առաջին բաժնում կամ Ներածության մեջ, որն ունի երկու ենթաբաժին՝ «Աշխարհիկ ավանդույթը» և «Ահաբեկչության դատապարտում», ընդհանուր գծերով քննարկվում է Ադրբեջանում իսլամի առաջացման և հետագա տարածման հարցը: Շիա իսլամը տիրապետող դարձավ ներկայիս Ադրբեջանի տարածքում 16-րդ դարից ի վեր, մինչդեռ հյուսիսային Ադրբեջանում, որտեղ պարսկական ազդեցությունը թույլ էր, մնաց սուննի իսլամը: Ադրբեջանում և Իրանում ապրող ադրբեջանցիներն անջատվեցին իրարից 1828թ. Ռուսական և Պարսկական կայսրությունների կողմից Թուրքմենչայի պայմանագրից հետո: Արդյունքում՝ Ադրբեջանի տարածքում ուժեղացավ ցարական ազդեցությունը, խթանվեց ռուսացումը և իսլամը մարգինալացավ: Իսկ հետագայում խորհրդային ժամանակահատվածում տեղի ունեցավ հասարակության հետագա աշխարհիկացում: Սգլիթների մեծ մասը փակվեց, կրոնական գործիչները բռնությունների ենթարկվեցին: Այդ առումով կրոնական գիտակցությունը հնարավոր չեղավ վերականգնել անգամ 1991թ. Ադրբեջանի անկախացումից հետո: Այսօր Ադրբեջանն աշխարհիկ երկիր է, որի բնակչության միայն մի փոքր մասն է հետևում իսլամի հիմնարար դրույթներին: 2006թ. անցկացված հարցախույզի տվյալներով՝ բնակչության 7,2 տոկոսն է խորքային հավատացյալ, 49,7 տոկոսը հավատում է Աստծուն, սակայն գործնականում չի իրականացնում իսլամի սկզբունքները: Իսլամական ինքնությունն առավելապես հիմնված է մշակույթի և էթնիկության, քան կրոնի վրա: Բնակչության 2/3-ը շիա է, 1/3-ը՝ սուննի: Կրոնական խմբերի հիմնական մասը համագործակցում է կառավարության հետ և ճանաչում պետության կողմից հովանավորվող Կովկասի մահմեդականների վարչության հոգևոր իշխանությունը: Միայն առանձին կրոնական խմբեր իրենց համարում են անկախ, չեն ենթարկվում վարչությանը: Երկրի հյուսիսային և հարավային շրջանների բնակիչներն ավելի հավատացյալ են: Որոշակիորեն կրոնականացված է Բաքվի հյուսիսային Նարդարան շրջանը:

Չնայած Ադրբեջանն աշխարհիկ երկիր է, սակայն լինելով հարևան Իրանին, Թուրքիային և Ռուսաստանի կազմում գտնվող Դաղստանին, նաև գտնվելով Մերձավոր Արևելքի հարևանության մեջ, թիրախ է արտաքին իսլամական ազդեցության համար: 1990-ականներից սկսած Ադրբեջանում սկսեցին հիմնավորվել արմատական իսլամիստական շարժումներ: Ադրբեջանում գործող միջազգային առաջին արմատական կազմակերպությունը «Ալ-կաիդայի» հետ կապեր ունեցող «Ալ-ջիհադն» էր: Նմանօրինակ կազմակերպությունների շարքում էին «Ջեյշուլլահը», «Հիզբ ութ-թահրիբը», «Կովկասի իսլամական բանակը», «Ջամաաթ ալ-մուվահիդդունը», որոնք տարբեր ժամանակներում իշխանությունների կողմից հիմնականում չեզոքացվել են: Վերջին տասը տարիների ընթացքում Ադրբեջանում փաստորեն առկա էին արմատական իսլամի առաջացման մարտահրավերներ: Սակայն իշխանություններին հաջողվեց բռնությունների միջոցով կանխել այն սպառնալիքները, որ ներկայացվում էին որպես արտաքին ուժերի կողմից թելադրված:

Երկրորդ բաժինը, որ վերնագրված է «Արտաքին ազդեցություններ», ունի չորս ենթաբաժին՝ «Մերձավոր Արևելք», «Դաղստան ու Չեչնիա», «Իրան» և «Թուրքիա»: Երիտասարդ ադրբեջանցիները, ովքեր 1980-ականների վերջերին և 1990-ականների սկզբներին ուսանելու էին գնացել Մատույան Արաբիա, Քուվեյթ կամ Եգիպտոս, ինչպես նաև ուխտավորներն իրենց հետ Ադրբեջան բերեցին սալաֆի իսլամը, որ Ադրբեջանում ասոցացվում է վահաբականություն

եզրի հետ: Սալաֆի իսլամը, որը փաստորեն ներմուծվեց Մերձավոր Արևելքից, փորձեց լցնել այն հոգևոր վակուումը, որ օբյեկտիվորեն կար անկախացումից հետո, և որին առաջին հերթին ընդառաջ գնացին երիտասարդները: Սալաֆի հետևորդների թիվը երկրում հաշվվում է շուրջ 10.000: Երկրում գործել են սալաֆիական մի շարք կառույցներ՝ «Իսլամական ժառանգության վերածննդի կազմակերպությունը» (որ վերանորոգել է 62 մզկիթ, որոնցից չորսը՝ Բաքվում, ֆինանսավորել է Բաքվի Աբու Բաքր մզկիթի շինարարությունը), սաուդական «Միջազգային իսլամական բարեգործական կազմակերպության» մասնաճյուղը և այլն:

Արաբական և Միջին Արևելքի այլ երկրներից Չեչնիայում կովոդ մոջահիդները (որ անցնում էին նաև Ադրբեջանի և Դաղստանի տարածքով) նույնպես զգալի դեր են խաղացել սալաֆիականության տարածման համար: Իսկ Ադրբեջանի հյուսիսում ապրող փոքրամասնությունները՝ լեզգիներ, ավարներ և ծախուրներ, էթնիկ սերտ կապեր ունեն Դաղստանում: Բացի այդ, 2000-2001թթ. Ադրբեջանում հաստատված շուրջ 10.000 չեչեն փախստականներ սալաֆիական գաղափարների կրողներ էին: Որոշ ադրբեջանցիներ միացել են դաղստանյան ջամաթներին (ռազմական խմբավորումներին) կամ չեչեն ապստամբներին: Պաշտոնական տվյալներով՝ շուրջ 300 ադրբեջանցիներ մարզվել են Չեչնիայի և Դաղստանի մարզական ճամբարներում: Նման միտումներ ներկայումս էլ կան:

Ադրբեջանի անկախացումից հետո աստիճանաբար սկսեց ուժեղանալ իրանական ազդեցությունը: «Իմամ Խոմեյնիի բարեգործական հիմնադրամն» օգնում էր Ադրբեջանին Լեռնային Ղարաբաղի պատերազմից հետո, երկիր էր ներմուծվում մեծաքանակ իրանական կրոնական գրականություն: 1991թ. ստեղծվեց «Ադրբեջանի իսլամական կուսակցությունը», սակայն իշխանությունները մտավախություն ունեին, որ Իրանը կօգտագործի այդ կառույցը՝ ապակայունացնելու աշխարհիկությունը, և 1995-ին կուսակցությունն արգելվեց: Ադրբեջանում գործել է իրանամետ «Հիզբալլահի» մասնաճյուղ, որին իշխանությունները 2000-ին մեղադրեցին 1997թ. ադրբեջանցի գիտնական Զիա Բունիաթովի սպանության մեջ: 2001-ին իշխանությունները փակեցին իրանական բոլոր 22 մեդրեսները՝ կրոնական դպրոցները:

Զնայած Ադրբեջանը շիական պետություն է, սակայն կրոնական ինստիտուցիոնալիզմի տեսակետից նման չէ Իրանին: Այստեղ չկա շիա հոգևոր հիերարխիա, չկա *մարջա ալ-թակլիդ*՝ կրոնական սկզբնաղբյուր, որին հավատացյալները պետք է հղում անեն, Ադրբեջանի *շեյխու ուլ-իսլամը* դոգմաների և սուրբ օրենքների բացարձակ մեկնող չի համարվում: Այս «բացերով» է պայմանավորված այն հանգամանքը, որ իրանցի միսիոներները կարող էին ազդեցություն ձեռք բերել որոշ շիա շրջանակներում: Արդյունքում՝ մինչև 2000թ. իրանցի միսիոներները երկրից հեռացվեցին:

Այսօր Իրանի կրոնական ազդեցությունը շատ թույլ է, սակայն շարունակում են գործել «Իրանական մշակութային կենտրոնը» և «Իմամ Խոմեյնիի բարեգործական հիմնադրամը»: Ամենայն հավանականությամբ Իրանը կապեր է հաստատում Ադրբեջանի հարավում ապրող թալիշական փոքրամասնության հետ: Իրանական «Սոհար» հեռուստաալիքը, որ հեռարձակվում է նաև Ադրբեջանի հարավում, պարբերաբար խոսում է թալիշական փոքրամասնությունների իրավունքների մասին, քննադատում Բաքվի իշխանություններին:

Ադրբեջանի անկախությունից հետո առավել արմատավորվել է թուրքական սուննի իսլամը, քանի որ այն իշխանությունների կողմից ընդունելի ուղղություն է, համարժեք Ադրբեջանի աշխարհիկ պետության մոդելին: Ադրբեջանի իշխանությունները կրոնական հարցերում Թուրքիայի հետ ակտիվորեն համագործակցում են: Թուրքիան ֆինանսավորել է որոշ մզկիթների վերանորոգումը, մի շարք հոգևորականներ վերապատրաստվել են Թուրքիայում, Ադրբեջանից բազմաթիվ ուսանողներ են մեկնել Թուրքիա՝ սովորելու տեղի բարձրագույն իսլամական դպրոցներում: Բաքվի համար ընդունելի է թուրքական իսլամի մուսքը կառավարական խողովակներով, սակայն Ադրբեջանում գործում են նաև թուրքական պաշտոնականից դուրս շրջանակներ, որոնցից է Ֆեթուլլահ Գյուլենի շարժումը, մասնավորապես՝ Նուրսու խմբերը, որոնք 2007-ին Ալլահ Շյուքյուր Փաշազադեի կողմից հայտարարվել են «ոչ ցանկալի»:

Երրորդ բաժինը վերնագրված է «Անկախ իսլամական խմբեր», որում ներառված ա. «Սալաֆի խմբեր» ենթաբաժնում խոսվում է Բաքվի, Հյուսիսային Ադրբեջանի, սալաֆիների, իսլավորիզների մասին: Այստեղ թերևս ամենակարևորը Բաքվում գործող Աբու Բաքր մզկիթի

համայնքն է և նրա խարիզմատիկ առաջնորդը՝ Մատույան Արաբիայում կրթություն ստացած երիտասարդ Համեթ Մուլեյմանովը:

Երրորդ բաժնի հաջորդ՝ բենթաբաժինը կոչվում է «Անկախ շիաներ»: Դրանում հիմնականում շեշտադրված է Ջումա մզկիթի համայնքը, ներկայացված են այլ անկախ ուղղություններ, նաև՝ 2002 և 2006թթ. Նարդարանի դեպքերը:

Չորրորդ բաժինը, որ վերնագրված է «Պետության արձագանքը», բաժանված է հետևյալ ենթաբաժինների՝ ա. «Կրոնի պետական վերահսկում» (դրանում ներկայացված են «Օրենսդրական շրջանակ», «Կրոնական կազմակերպությունների գծով պետական հանձնաժողովը», «Կովկասի մահմեդականների վարչության բարեփոխումը» թեմաները) և բ.«Պետական ռեպրեսիաներ»:

Չորրորդ բաժնում ընդհանուր գծերով ներկայացվում են կրոնական ազատությունների և ինստիտուտների մասին օրենքում ամրագրված դրույթները, քննարկվում է իսլամի ու պետության փոխհարաբերությունների հարցը:

Եզրակացության մեջ արված են հետևյալ հետևությունները. անկախ կրոնական համայնքները, որոնք գործում են Կովկասի մահմեդականների վարչության վերահսկողությունից դուրս, իշխանության կամ էլ երկրի աշխարհիկ կենսակերպին վտանգ չեն ներկայացնում: Միննույն ժամանակ, չկա որևէ խումբ, որին կարելի է համարել *ջիհադական*: Մի քանի խմբեր, որոնք հրապարակավ խոսում են իսլամական պետության ստեղծման մասին, իրենց ծրագրերն իրականացնելու համար բավարար ռազմավարական հայեցակարգերի և գործադրման մեխանիզմների չեն տիրապետում: Իշխանությունները, սակայն, չափազանցում են իսլամիզմից եկող սպառնալիքները՝ հիմնավորելու ռեպրեսիաները և վերահսկելու կրոնական կյանքը, որը միտումներ ունի քաղաքականացվելու և արմատականանալու մասնավորապես կրոնականացված այն շրջանակներում, ովքեր բռնությունների են ենթարկվել ոստիկանության կողմից:

Նշվում է, որ կառավարությունը սկսել է ավելի մեծ տեղ տալ չափավորներին: Ասենք, մեծ ջանքեր պետք է գործադրվեն միջին տարիքի քաղաքացիների կրոնական կրթության կազմակերպման հարցում, հոգևորականները պետք է քաջալերվեն: Իսլամի և իսլամական ինստիտուտների վերաբերյալ պետք է հասարակական դիսկուրսներ կազմակերպվեն, որոնցում պետք է ներգրավվեն անկախ և պաշտոնական հոգևորականներ, գիտնականներ, ՀԿ ներկայացուցիչներ: Իրենց հերթին, անկախ կրոնական համայնքները, մասնավորապես սալաֆիական խմբերը, իրենց անդամներին պետք է նախազգուշացնեն ահաբեկչության և մարտնչող իսլամի հնարավորության մասին և պետք է երկխոսության մեջ լինեն պաշտոնական իսլամի և իշխանությունների ներկայացուցիչների հետ:

Հավելվածում գետեղված է Ադրբեջանի քարտեզը, ինչպես նաև Միջազգային ճգնաժամային խմբի գործունեության, նպատակների և աշխարհագրության մասին տեղեկություններ:

Միջազգային ճգնաժամային խմբի «Ադրբեջան. անկախ իսլամը և պետությունը» խորագրով զեկույցը մեզանում ունի գիտական, աղբյուրագիտական և գործնական կարևոր նշանակություն և օգնում է բացահայտել Ադրբեջանում իսլամական գործունի վերաբերող մի շարք իրողություններ:

Արաքս Փաշայան
«Նորավանք» ԳԿՀ

«ЗАГОВОР СЛАБЫХ»

Итоги голосования в Генеральной Ассамблее (ГА) ООН по резолюции «Положение на оккупированных территориях Азербайджана» (A/RES/62/243, 14 марта 2008г.) обнаружили интересные реалии по одной из наиболее актуальных тем в нынешней международной повестки дня. Провозглашение Косово суверенным государством и череда последовавших за этим признаний независимости данного образования со стороны некоторых стран скатализировали активность в других точках «самопровозглашенности».

Указанная активность применительно к нагорно-карабахскому конфликту привела к двум важнейшим развитиям ситуации, имеющим комплексный характер: Азербайджан сначала «в полевых условиях» проверил жизнеспособность провозглашенной еще в 1991г. Нагорно-Карабахской Республики (инцидент на линии прекращения огня с 3 на 4 марта этого года), а затем, убедившись в тщетности такого пересмотра сложившегося статус-кво, направил свои усилия на «дипломатическую стезю». Последние получили свою материализацию в виде принятия резолюции ГА ООН A/RES/62/243.

Содержательная часть данной резолюции настолько не выдерживает критики в отношении своей сбалансированности и хотя бы относительной объективности, выражающей реалии нынешнего этапа урегулирования и сложившегося баланса сил в регионе конфликта, что даже такие оппоненты в трактовке современных норм международного права, как США и Россия, выразили свое обоюдное мнение об «односторонности, несвоевременности и контрпродуктивности такого шага азербайджанской стороны» (оценка совместного заявления сопредседателей Минской группы ОБСЕ).

Мы хотели бы обратить внимание на весьма конкретную сторону вопроса, вытекающую из субъектного состава тех стран, которые так или иначе выразили свое мнение в процессе и по итогам голосования в ГА ООН.

В процессе обсуждения целесообразности принятия резолюции на пленарном заседании 62-й сессии ГА ООН 14 марта 2008г. после вступительного слова представителя Азербайджана, представившего текст резолюции и позицию своей страны, высказались полномочные представители других стран-членов ООН.

Представитель Словении, как нынешней страны-председателя Европейского союза, от имени членов ЕС дал критическую оценку резолюции, сводившуюся к тому, что «ЕС подтверждает свою поддержку всех без исключения принципам, установленных в рамках Минской группы, и ценит взгляд сопредседателей Минской группы». От лица ЕС представитель Словении призвал стороны «избегать любых действий, которые бы могли повысить напряженность и подорвать предпринимаемые услуги посредничества»¹.

Представители США и Франции выступили с идентичных позиций о «несбалансированности» текста резолюции по принципам, лежащим в основе нынешнего этапа процесса урегулирования конфликта. Представитель США несколько раскрыл рамки этих основ, указав на принципы «территориальной целостности, неприменения силы, равных прав всех пострадавших лиц и других принципов международного права». Важно указать, что представитель США связал вопрос целесообразности принятия резолюции с имевшим место за несколько дней до этого резким обострением ситуации на линии прекращения огня: «в то время как серьезные инциденты, приведшие к человеческим жертвам, имели место на линии соприкосновения, обе

¹ Здесь и далее используется стенограмма 86-го заседания 62-ой сессии Генеральной Ассамблеи ООН, <http://www.un.org/News/Press/docs/2008/ga10693.doc.htm>.

стороны должны воздерживаться от односторонних и излишних действий, будь то за столом переговоров или в регионе соприкосновения».

Последовавшие за этим выступления представителей Пакистана (от имени организации «Исламская конференция», ОИК), Украины, Китая, Турции в той или иной степени сводились с одной стороны к поддержке принятия резолюции, но с другой – к поддержке усилий Минской группы ОБСЕ в урегулировании конфликта.

В этой связи можно отметить противоречивость такой «комплементарной» позиции указанных стран: весьма сложно представить себе ситуацию, когда поддерживаешь усилия того институционального образования, которое четко высказалось против принятия резолюции и оценивает последнюю как помеху в общем процессе урегулирования конфликта, и одновременно высказываешься за целесообразность принятия данной резолюции.

Взявшая после Турции слово Армения подвергла обстоятельной критике предлагаемый текст резолюции и в очередной раз озвучила принципиальную позицию армянской стороны: «...народ Нагорного Карабаха не будет отброшен назад под защиту того правительства, которое санкционировало погромы и позже послало свою армию против него».

Попробуем сформулировать некоторые выводы, напрашивающиеся после субъектного ознакомления с тем, кто и как голосовал в момент принятия резолюции:

1. 39 стран, отдавших свой голос за принятие резолюции, – это страны, которые можно отнести к нескольким «группам интересов». Сюда входят преимущественно представители «группы исламской солидарности», страны-члены ОИК – 31 государство, а также страны, которые имеют в той или иной степени, с той или иной интенсивной выраженностью конфликты «самопровозглашенности», конфликты этнополитического свойства с потенциалом отделения от «материнского» государства. К этой «группе интересов» относятся Грузия, Камбоджа, Колумбия, Молдова, Мьянма, Сербия, Украина. Очевидно, что в рамках первой «группы интересов» есть государства, на решение которых проголосовать за резолюцию повлияли оба фактора – «исламская солидарность» и «внутренний сепаратизм», а точнее, наличие второго фактора плюс к первому перевесило «чашу» симпатий таких государств.

Несмотря на общую атмосферу доброжелательности к Армении со стороны арабского мира, приходится отметить, что большинство стран-членов Лиги Арабских Государств (15) проголосовало за принятие резолюции.

2. В числе 39-ти стран, отдавших свои голоса за резолюцию, присутствуют или «классические» образцы так называемых «несостоявшихся государств» («*failed states*») – Афганистан, Сомали, Судан, или потенциальные кандидаты, находящиеся на грани вхождения в эту своеобразную группу стран. Последние с весьма большой долей условности можно оценивать с позиций их международной правосубъектности и эффективности контроля за собственной «международно признанной» территорией.

Важнее подчеркнуть тот факт, что более половины государств в этой группе относятся к наиболее слабым государствам развивающегося мира, критерии и параметры которых получили свое подробное выражение в очень интересном докладе, сделанном в рамках одного их самых авторитетных аналитических центров мира – Института Брукингс (*Brookings Institution*). По этому критерию («слабость государства»), 17 стран из 39 проголосовавших за резолюцию относятся к «очень или весьма слабым» государствам по классификации *Brookings Institution*: с занимающего первое место в этом списке Сомали – до находящейся на 51 месте Гамбии¹.

Соответственно, большая часть стран, проголосовавших против резолюции или воздержавшихся при голосовании, относится к странам, находящимся в классификации *Brookings Institution* на позициях высоких показателей «стабильности» и «мощности».

3. Голосование по резолюции выявило тот факт, что страны, хотя и находящиеся в орбите плотного и интенсивного влияния со стороны наиболее крупных и могущественных государств

¹ См. Приложение.

мира, проголосовавших против принятия резолюции (три постоянных члена Совета Безопасности (СБ) ООН – США, Россия и Франция), выражали свое мнение, исходя из наличия внутренних проблем: Грузия, Украина, Афганистан, Ирак голосовали не так, как США; Сербия голосовала не так, как Россия; Сенегал голосовал не так, как Франция. Поэтому, с нашей точки зрения, не следует относиться, например, к факту голосования за резолюцию со стороны Грузии, как к проявлению недружественности или тем более враждебности к Армении. Нам уже давно следует исходить из того принципа, что «соседские отношения – это одно, а национальные интересы – это другое».

Трезвый анализ ситуации должен привести нас к осознанию необходимости более плотного диалога, в частности со странами постсоветского пространства, направленного на представление объективной картины вокруг нагорно-карабахского урегулирования. Тогда, возможно, мы не столкнемся с такими проявлениями позиций некоторых стран СНГ, которые входят наряду с нами в систему коллективной безопасности на постсоветском пространстве (ОДКБ), но голосуют по факту «исламской солидарности» или по другим соображениям подобного свойства (Узбекистан).

Здесь будет уместным отметить последние по времени усилия Азербайджана и Турции по приданию «межтюркскому диалогу» более конкретного и прагматичного вида. 21–22 февраля 2008г. в Турции (г.Анталья) прошло первое заседание Межпарламентского совета тюркоязычных государств. В заседании участвовали вице-спикеры парламентов Турции, Азербайджана, Казахстана и Киргизии (приглашенные для участия в заседании Туркменистан и Узбекистан не прислали своих представителей). По итогам заседания был подписан протокол о намерении создать Парламентскую ассамблею тюркоязычных государств (ПАТГ), а также представлен проект Устава Межпарламентского меджлиса тюркоязычных государств (ТЮРКПАМ). В проекте Устава ТЮРКПАМ в качестве одной из целей этого межгосударственного органа отмечена «выработка общих политических взглядов, организация общих мероприятий».

4. Голосование против резолюции трех стран – постоянных членов СБ ООН, еще раз подтверждает факт перспективности их «минской» площадки сотрудничества, которая может спроецировать свое конструктивное влияние на другие сферы нахождения точек соприкосновения, например, между США и Россией. Особого внимания заслуживает позиция Индии, голосовавшей в числе «отважной семерки» против резолюции, исходя из прогрессирующей мощи и авторитета этой региональной державы на международной арене.

5. Позицию ровно 100 государств, воздержавшихся при голосовании по резолюции, следует рассматривать как проявление их принципиальной поддержки усилиям всех сторон конфликта и задействованных в процессе урегулирования посредствующих субъектов. В нынешних международных реалиях весьма единичны случаи солидарности между постоянными членами СБ ООН, а рассматриваемую нами тему можно с уверенностью отнести именно к таким исключениям. Несмотря на то, что представитель Китая перед голосованием за текст резолюции высказался в целом с «азербайджаноцентричных» позиций (уважение и поддержка суверенитета и территориальной целостности Азербайджана)¹, его страна воздержалась при голосовании, как сделала это и Великобритания, которую трудно заподозрить в симпатиях к армянским интересам.

Помимо этого, позицию таких влиятельных стран в международных отношениях, чей потенциал мощи выходит за региональные рамки – Израиль, Казахстан, Япония, следует отнести к позитиву армянской стороны, особенно с учетом того, что первое из указанных государств не всегда (а точнее очень редко) занимает даже относительно проармянскую позицию, а второе

¹ Для нас важна следующая озвученная официальным Пекином точка зрения: «...ситуация весьма чувствительная. Она напрямую затрагивает не только отношения между Азербайджаном и Арменией, но и мир и стабильность во всем регионе Кавказа».

государство – Казахстан – является важным актором как в мире ислама, так и важнейшим субъектом в набирающем мощь регионе Центральной Азии.

6. Позицию некоторых стран, вовсе отсутствующих в момент голосования по резолюции (46 государств), также следует рассматривать в принципиальном ключе, подчеркивающим их особое мнение применительно к нагорно-карабахскому конфликту. Здесь для нас важна позиция Ирана, как нашего ближайшего соседа и одновременно одного из столпов в исламском мире в целом и в ОИК в частности, Ливана, Сирии, Кыргызстана, Туркменистана, Туниса, Таджикистана, хотя и являющихся членами ОИК, но сумевшими дистанцироваться от такого проявления «исламской солидарности».

Несмотря на то, что по итогам голосования за резолюцию ГА ООН A/RES/62/243 можно констатировать недостижение Азербайджаном предварительно ставимых им целей, тем не менее, сам факт того, что резолюция была принята, должен стать еще одним поводом для самого тщательного анализа дипломатических усилий Армении, которые, к сожалению, на нынешнем этапе находятся не на должном уровне. Приходится признать, что многие процессы вокруг необходимости придания нагорно-карабахскому вопросу справедливого и объективного образа на международной арене формируются при отсутствии эффективного дипломатического участия Армении, а относительная эффективность данных процессов находит свое проявление по инерции (общее благожелательное отношение к армянской государственности со стороны многих стран мира) и вне связи с нагорно-карабахским урегулированием.

Михаил Агаджанян

Индекс слабости государств развивающегося мира
(*Index of State Weakness in the Developing World*)¹

(показатели индекса из списка 141 государств: в диапазоне от 0,00 – наименьшего коэффициента, до 10.00 – наибольшего коэффициента соответствующего параметра)

Место	Страна	Политические параметры	Параметры безопасности	Экономические параметры	Социальные параметры	ВВП на душу населения (US \$)	Итоговый коэффициент
1	Сомали	0,00	1,37	0,00	0,70	226	0,52
2	Афганистан	2,08	0,00	4,51	0,00	271	1,65
4	Ирак	1,67	1,63	2,87	6,27	1134	3,11
6	Судан	2,06	1,46	5,05	4,59	81	3,29
13	Сьерра-Леоне	3,87	5,43	5,04	0,76	240	3,77
21	Нигер	4,69	7,33	5,45	0,94	260	4,60
27	Уганда	4,55	4,89	5,78	4,23	300	4,86
28	Нигерия	3,51	5,37	5,39	5,24	640	4,88
30	Йемен	3,64	6,43	5,80	4,85	760	5,18
31	Коморские острова	4,20	8,18	4,24	4,20	660	5,20
33	Пакистан	3,52	4,69	6,58	6,13	770	5,23
34	Камбоджа	3,00	7,18	6,33	4,57	480	5,27
36	Узбекистан	1,78	6,66	5,20	7,54	610	5,30
38	Джибути	3,69	8,21	5,05	4,29	1060	5,31
47	Колумбия	5,79	1,78	5,84	9,11	2740	5,63
48	Бангладеш	3,97	6,55	6,08	5,98	480	5,64
51	Гамбия	4,54	8,29	5,26	5,06	310	5,79
...
80	Азербайджан	3,36	7,06	7,85	7,89	1850	6,54
...
105	Армения	4,73	8,23	7,97	8,44	1930	7,34

¹ Susan E. Rice, Stewart Patrick, Index of State Weakness in the Developing World, The Brookings Institution, http://www.brookings.edu/reports/2008/02_weak_states_index.aspx.

Полная версия доклада: http://www.brookings.edu/reports/2008/~media/Files/rc/reports/2008/02_weak_states_index/02_weak_states_index.pdf.

ВОПРОС ГЕНОЦИДА АРМЯН КАК ИНСТРУМЕНТ ДАВЛЕНИЯ ИЗРАИЛЯ

В конце марта – начале апреля обсуждения в Кнессете вокруг возможного признания Геноцида армян в Турции вызвали большой скандал как в стране, так и за ее пределами. Основная борьба шла между двумя депутатами: Зеэвом Элькином и Йосефом Шагалом.

26 марта Кнессет впервые принял принципиальное решение о том, что тема Геноцида армян будет обсуждаться одной из комиссий израильского парламента. После этого, уже с 1 апреля началось обсуждение того, в какой именно комиссии должно в дальнейшем идти рассмотрение этого вопроса.

Предложение изначально было внесено депутатом Хаимом Ороном (МЕРЕЦ). Зеэв Элькин («Кадима») предложил рассмотреть данную тему в комиссии по образованию и культуре. В тоже время Йосеф Шагал («Наш Дом – Израиль») предложил, чтобы этот вопрос был заслушан в комиссии по внешним делам и обороне. Идея Элькина была дать вопросу культурологический и исторический смысл, в то же время Шагал делал упор на политическом и военном аспектах проблемы в свете возможных ухудшений отношений с Турцией.

Обсуждения вылились в скандальную перепалку между Элькином и Шагалом. При этом Шагал откровенно шантажировал: «Ситуация такова: сегодня в Азербайджане живет 20.000 евреев. Реально, двадцать тысяч. Это еврейская община, у которой очень хорошие отношения с местной властью, с местным народом. Они традиционно хорошо относились к евреям, никогда антисемитизма там не было. Но народ горячий, да? Для Азербайджана и Турции Геноцид армян – это красная тряпка... Все, что может за этим последовать – от разрыва дипломатических отношений, до (не дай Бог) каких-то эксцессов в Азербайджане – это все на совести тех людей, которые выносят это предложение, не понимая, что за ним стоит. Если понимают, то просто на чисто популистском уровне... Я ясно излагаю свою мысль?» В целом можно видеть, что Шагал использует риторику, которую уже применяли в Анкаре: угрозы физической безопасности евреев, проживающих в стране.

В данном вопросе следует также учитывать не только недовольство Турции, но и фактор Азербайджана, который лоббирует интересы Анкары в антиармянских вопросах. Йосеф Шагал является выходцем из этой страны и активно лоббирует интересы Баку, являясь руководителем межпарламентской группы дружбы «Израиль-Азербайджан». Отметим, что 12 апреля исполнился год со дня создания международной ассоциации Израиль-Азербайджан «АзИз», генеральным директором которой является Лев Спивак.

По словам самого Спивака, за год образовались 14 городских отделений этой организации во всех крупных городах Израиля. Членами «АзИз» стали более 10 тыс. семей выходцев из Азербайджана. 31 декабря в Израиле был открыт азербайджанский культурный центр, который уже успел провести ряд мероприятий, посвященных множеству событий, которые теперь отмечаются в Азербайджане как дни геноцидов. Филиалы этой организации открылись также и в Германии и Голландии.

Азербайджан, как всегда, в вопросе геноцида оказался впереди Турции. Так, азербайджанский депутат Фазиль Газанфароглу заявил: «Если Израиль признает Геноцид армян, мы сделаем все, что в наших силах, чтобы был принят документ в связи с политикой геноцида палестинских арабов. На этот раз виновной в принятии нами такого шага станет израильская сторона».

Для Израиля Турция продолжает оставаться важным союзником в регионе, если не самым важным и основным из региональных держав. Как секулярная страна, в определенной степени противостоящая арабскому вектору в регионе, Турция жизненно необходима израильскому государству. Не говоря уже об экономических и других факторах, включая, например, исполь-

зование турецкого небесного пространства для тренировок израильских военных летчиков. В этом плане, несмотря на то, что с моральной точки зрения именно евреи должны были первыми признать Геноцид армян, с практической точки зрения именно Израиль, находящийся в сложнейшем геополитическом положении, не может этого сделать.

В то же время ситуация в регионе динамично меняется. Обсуждения в Кнессете стоит рассматривать в контексте очередного использования вопроса геноцида в политических целях. В последнее время в мире все чаще тема преступления против человечности становится орудием шантажа по отношению к тем или иным государствам. Ярким примером этого стал последний скандал, развернувшийся вокруг Международного трибунала по бывшей Югославии. Бывший прокурор Гаагского трибунала в мартовском интервью итальянскому изданию *La Stampa*, касаясь вопроса признания Косово, отметила: «Глубокий раскол наблюдается в Европе и не только. Это явно политический вопрос. Трибунал не должен был бы вникать во все это. Но мы осознаем, что в настоящий момент политика занимает центральное место во всех этих делах». И буквально через несколько дней трибунал оправдал косовского экс-премьера Рамуша Харадиная, который обвинялся в преступлениях против человечности.

Геноцид армян также активно используется сегодня для политического давления на Анкару. В этом же контексте стоит рассматривать появление этого вопроса в Кнессете. Отношения между Тель-Авивом и Анкарой в последнее время довольно непростые. Турция из-за курдского вопроса стала все более сближаться с кровными врагами Израиля – Ираном и Сирией. Кроме того, есть опасения, что турецкое общество будет продолжать двигаться в направлении исламского фундаментализма и сменит прозападный вектор, что полностью противоречит интересам Израиля.

Одним из симптомов напряженности в отношениях между Тель-Авивом и Анкарой стал факт поддержки в прошлом году ряда еврейских лоббистских организаций в США требований армян по признанию Геноцида со стороны официального Вашингтона. Тогда же турецкие власти напрямую пригрозили Израилю, предупредив, что не смогут в случае чего гарантировать безопасность евреев в Турции.

Израиль использует на данный момент мягкие формы давления на Турцию, в том числе и периодическое выдвигание на первый план вопроса геноцида. Правительство официально однозначно поддерживает Анкару, однако в то же время вопрос поднимается через другие структуры, будь это лоббисты за рубежом либо парламентарии. Поэтому ожидать, что Кнессет в ближайшее время примет резолюцию по Геноциду армян не приходится. Как и в случае с США, в ближайшее время этот вопрос будет постоянно использоваться Тель-Авивом для определенного давления на Анкару.

Самвел Мартиросян

ՀՈՐԴԱՆԱՆ. ԱՊԱԳԱ ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

2008թ. ապրիլի 11-16-ը Հորդանանի մայրաքաղաք Ամանում տեղի ունեցավ միջազգային էներգետիկ անվտանգության հիմնախնդիրներին նվիրված գիտաժողով՝ կազմակերպված Նիդեռլանդների թագավորության Գրոնինգեն նահանգի և Հորդանանի կառավարության կողմից: Ստորև ներկայացված դիտարկումները Հորդանանում և տարածաշրջանում տեղ գտած քաղաքական զարգացումների շուրջ՝ կոնֆերանսի ընթացքում, ինչպես նաև մեր անձնական շփումների արդյունքում ձեռք բերված տեղեկատվության և վերլուծությունների արդյունք են:

